ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ17/66»*

ք. Վանաձոր « 26 » հուլիսի 2017թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյան-ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Այպոշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հովհաննես Պողոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.09.2017թ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

...ահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[1]:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 5940000 (հինգ միլիոն ինը հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, որից 990000 (ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը;

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ

ի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, *բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:*

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Վանաձորի համայնքապետարան»
Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232351024
ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Այպոշին» ՍՊԸ

Ք.Վանաձոր, Տիգրան մեծի 24/52

Ինեկոբանկ ՓԲԸ, Վանաձորի մ/ճ

Հ/Հ 2050222017141001

ՀՎՀՀ 06933045

----------Հ.Պողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 26 » հուլիսի 2017թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 17/66 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«**քաղաքացիների սպասարկման** գրասենյակի վերակառուցման և վերանորոգման»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ
1	3	4	5	6	7
	ՔԱՆԴՈՒՄ ԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄ				
1	T=100մմ միջնապատերի քանդում	$մ^2$	50.6	0.74	37.67
2	Տուֆե կրող պատի քանդում բացվածքը լայնացնելու նպատակով	$մ^3$	1.12	17.80	19.94
3	Փայտե միափեղկ դռների ապամոնտաժում 2 հատ	$մ^2$	3.69	1.07	3.95
4	Փայտե երկփեղկ դռների ապամոնտաժում 2 հատ	$մ^2$	4.9	1.07	5.25
5	Փայտե երկշերտ պատուհանների ապամոնտաժում 3 հատ	$մ^2$	10.5	1.82	19.12
6	Պատուհանների մետաղական ճաղաշարերի ապամոնտաժում 1.6x2.2 մ /3 հատ/	$մ^2$	10.56	2.68	28.26
7	Փայտե մանրահատակի քանդում, ներառյալ շրիշակները	$մ^2$	60	0.49	29.65
8	Պատերի հարդարարական շերտերի քերթում	$մ^2$	90	0.70	62.61
9	Առաստաղի հարդարարական շերտերի քերթում	$մ^2$	24.4	0.91	22.20
10	Քիվերի մասնակի ապամոնտաժում	գմ	17	1.14	19.41
11	Կերամիկական Սալիկից շրիշակների ապամոնտաժում	գմ	10	0.48	4.80
12	Լուսատուների ապամոնտաժում	հատ	10	0.26	2.60
13	Բոլոր էլեկտրական վարդակների և անջատիչների և բաժանարար տուփերի ապամոնտաժում	հատ	27	0.09	2.41
14	Բոլոր չգործող բաց մալուխների ապամոնտաժում	գմ	150	0.09	13.92
15	Թուջե ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում	հատ	3	0.87	2.62
16	Լամինատե թերթասալերի ապամոնտաժում ջեռուցիչների և հորանի վրայից	$մ^2$	5.4	0.18	1.00
17	Հորանի երեսպատման քանդում	$մ^2$	3.4	0.18	0.63
18	Շին. աղբի հավաքու, բարձում եւ տեղափոխում 3կմ	տ	8.7	1.34	11.67
	ՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ				

	Հորանի երեսապատում ԳԿԹ-ով (T=12 մմ): Ներառյալ ստադերը, ինքնապարուրվող պտուտակները: ԳԿԹ տեղադրվում է ստադի մի կողմից կողմից	մ^2	3.75	4.54	17.04
4	Պատ կանոնավոր տուֆից (T=200 մմ), h=450մմ	մ^3	0.36	18.27	6.58
5	Պատի խորշի լրացում խարամաբետոնով, բազմոցի տակ	մ^3	0.3	49.17	14.75
6	Նախորդի հարթեցնող ց/ա շերտ 15 մմ	մ^2	0.9	1.46	1.31
	ՋԵՐՄԱՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ				
1	Արտաքին պատի մեջ օդանցքների հերմետիզացում օդատարների/օդամուղների շուրջ՝ ջերմամեկուսիչ փքվող փչովի նյութով	տեղ	5	0.66	3.31
2	Լուսամուտների տակ, արտաքին պատի ջերմամեկուսացում արտամղված փրփրապոլիստիրոլով (T=20 մմ)	մ^2	5	0.92	4.58
	ԲԱՑՎԱԾՔՆԵՐ				
1	Լուսամուտագոգերի երեսապատում 1650x300մմ կերամագրանիտե սալիկներով (հատակի մոխրագույնով), ջրակայուն սոսնձի վրայից 5.2մ	մ^2	1.56	11.34	17.69
	ՀԱՏԱԿՆԵՐ			0.00	0.00
1	Առանց երևացող կարերի հատակի կերամագրանիտի տեղադրում: Չափը 600x600 մմ: Գույնը և տեքստուրան՝ նույնը ինչ նախասրահում առկա մոխրագույնն է կամ համանման երանգի, որը որոշվում է	մ^2	20	10.97	219.42
2	Առանց երևացող կարերի հատակի կերամագրանիտի տեղադրում: Չափը 600x600 մմ: Գույնը և տեքստուրան՝ նույնը ինչ նախասրահում առկա սպիտակն է կամ համանման երանգի, որը որոշվում է	մ^2	43	10.97	471.75
3	Ց/ա հարթեցնող վերջնաշերտ, T=25 մմ	մ^2	60	0.97	58.10
4	Ց/ա հարթեցնող նախաշերտ, T=35 մմ	մ^2	60	1.29	77.36
5	Շրիշակ հատակի մոխրագույն կերամագրանիտե սալիկներով	գմ	44.1	1.14	50.43
6	Մանրահատակի վնասված տեղերի նորոգում, ճեղքերի մեջ ծեփամածկում (հատակի գույնի)	մ^2	7.6	0.15	1.15
7	Մանրահատակի հղկում	մ^2	7.6	0.50	3.78
8	Մանրահատակի լաքապատում (ջրային հիմքի լաքով): Ներառյալ առկա փայտե շրիշակների նորոգումը	մ^2	7.6	0.51	3.89
	ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ				
1	Լուսամուտագոգերի տակ ց/ա երեսվաղ T=15 մմ	մ^2	1.49	0.66	0.98
2	Լուսամուտների տակ խորշերում պատերի ց/ա երեսվաղ T=20 մմ	մ^2	4.95	1.61	7.98
3	Պատերի նորոգում և հարթեցում գիպսոնիտե սվաղով	մ^2	89.74	0.87	77.66
4	Շեպույթների նորոգում և հարթեցում գիպսոնիտե սվաղով	մ^2	27.87	0.87	24.12
5	Պատերի հարդարարական շերտի հղկում-հարթեցում, նոր գրունտի շերտի պատրաստում	մ^2	137.56	0.33	45.00
6	Պատերի ներկում (երկու շերտ) լատեքսային ներկով (ներկի գրունտի վրայից), բարելավված որակի, ծեփամածկումով, սպունգով լվացվող, գույները ըստ նախագծի	մ^2	217.59	1.15	250.25
7	Առաստաղի սվաղի նորոգում և հարթեցում գիպսոնիտով կամ ծեփամածիկով	մ^2	17	1.00	16.99

	Առաստաղի սալիկում (սալիկի շրջակայքում) լաստանքսայլուն սալիկով (սալիկի պատուհանի պրոֆիլից), բարելավված որակի, սպունգով լվացվող, գույները ըստ նախագծի	$մ^2$	108.2	1.26	136.73
	ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ				
1	250x250 մմ-ոց անցքերի բացում 420 մմ հաստությամբ արտաքին պատի մեջ: Ներածման օդանցքի համար: Անցքը բացվում է սրբատաշ շարվածքով պատի մեջ և պահանջվում է պահպանել քարի ամբողջականությունը՝ հստակ գծերով, առանց վնասելու քարը բացվածքի շուրջը	հատ	3	4.08	12.24
2	Բացվածքի մեջ սվաղում ցեմենտ-ավազային շաղախով	$մ^2$	1.26	1.33	1.67
3	Նույնի ներկում ճակատային նյութերով, պատի քարի գույնի	$մ^2$	1.26	0.93	1.17
4	700x250 մմ-ոց անցքի բացում 650 մմ հաստությամբ արտաքին պատի մեջ: Արտամղող օդատարի համար	հատ	1	4.08	4.08
5	Անաղմուկ օդամուղ, 250x250 մմ չափի անցքի մեջ տեղադրելու համար: Ավտոմատ կարգավորվող շերտավարագույրով: Տեղադրվում է արտաքին պատի մեջ, ներսի կողմից	հատ	3	25.02	75.07
6	Անաղմուկ օդամուղ (31/36 դԲ), 810/1020 $մ^3$/ժամ, Airflow Aventa Inline Silent Fan կամ համարժեք: Տեղադրվում է արտաքին պատի դրսի կողմից կամ պատի բացվածքի մեջ: Առջևից տեղադրվում է պաշտպանիչ ճաղաշար (ներկած մոխրագույն), չափը՝ 1800x730 մմ կամ բացվածքի չափով: Ներառյալ երկու ռեժիմով արագության կարգավորիչը/անջատիչը: Կամ փոխարինել նույնին համարժեք մեկ հատ օդամուղով, առնվազն 1500 $մ^3$/ժամ	հատ	2	146.70	293.40
7	Օդանցքի պլաստիկ կամ մետաղական ճաղաշար, 250x250 մմ, ներկել արտաքին պատի գույնի	հատ	3	3.92	11.75
8	Օդատար պողպատե թիթեղից, T=0.7 մմ: Ներառյալ խողովակները միմյանց անկյունակներով ձգելու ծրջանակները, ռետինե գոտիները, շղթաներով կախիչները, հեղույսները և այլն	$մ^2$	26	5.97	155.35
9	Օդատարի և ճաղաշարների արտաքին մակերևույթի ներկում 2 շերտով, հատուկ մետաղի անհոտ, ոչ ալերգիկ, ոչ տոքսիկ, ներկով: Գույնը՝ RAL 9016	$մ^2$	23	1.16	26.75
10	Օդատարի ներքին մակերևույթի ներկում 1 շերտով, հատուկ մետաղի անհոտ, ոչ ալերգիկ, ոչ տոքսիկ, ներկով: Գույնը՝ սպիտակ	$մ^2$	21	1.16	24.43
11	Օդանցքի մետաղական ճաղաշար, 300x150 մմ: Գույնը՝ RAL 9016	հատ	5	12.38	61.88
12	Օդանցքի մետաղական ներկառուցվող ճաղաշար, 600x100 մմ: Գույնը՝ սպիտակ	հատ	6	4.37	26.25
	ՋԵՌՈՒՑՈՒՄ				
1	Ջեռուցման ալյումինե մարտկոցներ տեղադրում	էկմ	9	0.60	5.43
2	Ջեռուցման ալյումինե մարտկոցներ h=585 մմ	սեկցիա	36	4.73	170.43
3	Խողովակ (մետաղական) Ø20մմ	գմ	5	0.88	4.41
4	Պարուրով դետալներ (մետաղական) Ø20մմ	հատ	8	0.29	2.29
5	Փականներ Ø20մմ	հատ	8	3.13	25.02
6	Կախիչներ մարտկոցների համար	հատ	6	0.48	2.86
7	Ալեկաբոնդե թիթեղի ամրացում պատին, ջեռուցիչների հետևում: Չափը՝ ջեռուցիչի չափից 40 մմ կարճ ամեն կողմից	$մ^2$	1.8	8.88	15.98
	ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				

3	150(W)x50(H) մմ անցքի բացում կրող պատի մեջ, մալուխների մոնտաժման համար: Մեջը տեղադրվում է մետաղական խողովակ(ներ) և հարդարվում պարագծով:	հատ	1	2.05	2.05
	Ընդամենը				2804.58
	Վերադիր ծախսեր 13,3%				373.01
	Ընդամենը				3177.59
	Շահույթ11%				349.53
	ընդամենը				3527.12
	Չնախատեսված ծախսեր 3%				105.81
	Ընդամենը				3632.94
	ԱԱՀ 20%				726.59
	Ընդամենը				**4359.52**
	Լուսամուտներ եւ ապակե միջնորմներ				
1	5690x4095 մմ չափերով ներքին միաշերտ կոփած ապակիներով (T=12 մմ) միջնորմ, առանց շրջանակների: Ներառյալ բոլոր ամրացման դետալները: Այլ մանրամասները տես ստորև և նախագծում	հատ	1	1245.00	1245.00
2	Ներառյալ 2 դուռ՝ երկկողմանի բացվող	$մ^2$	4.80	0.00	0.00
3	Ներառյալ բռնակ, մետաղական գլանաձև ձող D=35-40 մմ, L=1 մ, տեղադրվում է ամեն դռան երկու կողմից: Գույնը՝ պողպատե: Ներառյալ ծխնիները	կ-տ	2	0.00	0.00
4	Ներառյալ փական բանալիներով	կ-տ	2	0.00	0.00
5	Դռան քրոմապատ/նիկելապատ սահմանափակիչներ՝ հատակին և պատին ձգվող, թափանցիկ ռեիտով	հատ	4	0.50	2.00
6	1650(w)x2270(h) մմ չափերով կամարաձև լուսամուտ, պրոֆիլը էներգաարդյունավետ (Ud = 0.91 W/(mUK)) ՊՎՔ՝ ուժեղացված մետաղական միջուկով, T=73 մմ (BRUEGMAN, Եվրոպական արտադրության կամ տեխնիկապես համարժեք), առնվազն 4 խցիկանի, շրջանակի գույնը՝ սպիտակ, երկշերտ ապակեփաթեթով: Բարդ փեղկով: Այլ մանրամասները տես ստորև և նախագծում: Բռնակների (6 հատ) և սխնիների (12 հատ) գույնը՝ սպիտակ	հատ	3	0.00	0.00
7	Այդ թվում բացվող լուսամուտներ	$մ^2$	6.9	40.00	276.00
8	Այդ թվում անշարժ լուսամուտներ	$մ^2$	3.45	27.00	93.15
9	Այդ թվում հակամիջատային ցանց, ամեն փեղկի հաշվարկով	հատ	6	9.20	55.20
10	Երկկողմանի բացվող լուսամուտների բարդ փական	հատ	6	12.00	72.00
11	Գալարավարագույր կանաչ գույնի: Գույնի երանգը ընտրվում է ճարտարապետի կողմից գնման ժամանակ	$մ^2$	18.40	6.66	122.54
	Ընդամենը				1865.89
	ԱԱՀ 20%				373.18
	Ընդամենը				**2239.07**
	Էլեկտրատեխնիկական աշխատանքներ				
1	1 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	12	0.09	1.03
2	2 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	1	0.19	0.19
3	3 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	6	0.29	1.72
4	4 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	4	0.34	1.37
5	1 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	12	0.19	2.29
6	2 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	1	0.33	0.33

	Էլեկտրական սնուցառուցիչ վարդակ, տիպ F, CEE 7/3 (Schuko) 16 Ա, 250 Վ, երկբևեռային հողանցումով	հատ	39	1.03	40.30
10	Երկու տեղանոց էլեկտրական վերադիր վարդակ, տիպ F, CEE 7/3 (Schuko) 16 Ա, 250 Վ, երկբևեռային հողանցումով	հատ	10	1.46	14.59
11	1 տեղանոց RJ-45 տիպի, cat. 5՝ համակարգչային ցանցի վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող)	հատ	5	2.80	13.98
12	2 տեղանոց RJ-45 տիպի, cat. 5՝ համակարգչային ցանցի վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող)	հատ	3	5.46	16.39
13	RJ-45 + RJ-11 տիպի (համակարգչային ցանց + հեռախոս) վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող)	հատ	2	4.03	8.06
14	Անջատիչ մեկ ստեղնով	հատ	4	0.97	3.86
15	Անջատիչ երկու ստեղնով	հատ	2	1.46	2.92
16	Էլեկտրական շղթայի ավտոմատների ներկառուցվող պլաստիկ արկղ, 24 մոդուլի համար	հատ	1	20.41	20.41
17	ТХЗ УЗО, 63 Ա, 220 Վ 1. Խումբ 2 + խումբ 5 2. խումբ 3.1 3. խումբ 3.2	հատ	3	13.50	40.49
18	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, 63 A, C դաս, երկբևեռ: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության (Legrand, ABB կամ համարժեք) 1. Խումբ 1 2. խումբ 3.1 3. խումբ 3.2	հատ	3	7.82	23.45
19	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХЗ, 10 Ա, C դաս,երկբևեռ: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության Խումբ 2	հատ	1	2.90	2.90
20	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХЗ, 25 Ա, C դաս, միաբևեռ: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության Խումբ 3.3	հատ	1	3.34	3.34
21	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХЗ, 10 Ա, B դաս, միաբևեռ: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության Խումբ 4	հատ	1	3.07	3.07
22	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХЗ, 6 Ա, B դաս, միաբևեռ: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության Խումբ 5	հատ	1	3.40	3.40
23	Խրամուղու քանդում և հետլիցք հողանցման կառուցման համար	$մ^3$	8	2.78	22.26
24	50x50x5 մմ, L=2.5 մ, պողպատե անկյունակների ուղղաձիգ տեղադրում հողի մեջ, հողանցման համար	հատ	8	5.00	39.96
25	Պողպատե շերտաձող —50x4, հողանցման համար	գմ	2	1.14	2.29
26	Պողպատե շերտաձող —40x4, խրամուղում, հողանցման համար	գմ	20	0.69	13.85
27	Հողանցման ալյումինե հաղորդալարի անցկացում, 1x40$մմ^2$ հատվածքով	գմ	30	0.68	20.54
28	Էկզոթերմիկ եռակցում հողանցման համար	կետ	9	0.19	1.69
29	Պոլիէթիլենային խողովակ ∅50 մմ, դրսից դեպի ապահովիչների տուփ հողանցման մալուխի համար	գմ	20	0.63	12.58

	Խումբ 1	գմ	20	0.77	15.34
33	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x2.5 մմ^2 Խմբեր 1, 2, 3.1, 3.2, 3.3 և կոնտուրներից վարդակների մեջ մտնողները	գմ	69	0.58	39.90
34	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x1.5 մմ^2, ջիղերը իրար կողք (տափակ) Խմբեր 1, 4	գմ	39	0.42	16.41
35	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x1.5 մմ^2, թափանցիկ պաշտպանիչ պատյանով, ջիղերը իրար կողք (տափակ) Խումբ 4	գմ	63	0.42	26.50
36	Ջեռուցման կոնվեկտոր, 1500 W, չափը՝ մոտ 600(W)x440(H)x80(T), տեղադրվում է հորիզոնական դիրքով, ջերմաստիճանի կարգավորման տվիչով, սարքի վրա անջատիչով (աջ կողմից), հոսանքի վարդակին միացումը աջ կողմից, խրոցով	հատ	1	41.93	41.93
37	Ջեռուցման կոնվեկտոր, 1000 W, չափը՝ մոտ 400(W)x400(H)x80(T), տեղադրվում է հորիզոնական դիրքով, ջերմաստիճանի կարգավորման տվիչով, սարքի վրա անջատիչով (աջ կողմից), հոսանքի վարդակին միացումը աջ կողմից, խրոցով	հատ	1	35.00	35.00
38	Ալեկաբոնդե թիթեղի ամրացում պատին, ջեռուցիչների հետևում: Չափը՝ ջեռուցիչի չափից 40 մմ կարճ ամեն կողմից	մ^2	0.5	8.88	4.44
39	Ծալքավոր ճկուն պլաստիկ խողովակ, ∅20 մմ, մալուխների մոնտաժման համար, մոխրագույն, չայրվող	գմ	100	0.37	36.66
40	Նախորդի պլաստիկ ամրակներ և ինքնապարուրող պտուտակներ (Lmax=18մմ)	հատ	70	0.02	1.60
41	Գնված լուսատուների տեղադրում	հատ	14	1.41	19.74
42	Ալյումինե անկյունակ 20x20 մմ ներկառուցվող սակառների ակոսը պատրաստելու համար	գմ	45	0.63	28.32
43	20x16 մմ փայտե չորսու շրիշակը պատին ձգելու համար	գմ	45	0.19	8.77
44	16x25 մմ պլաստիկ սակառներ համակարգչային ցանցի մալուխների մոնտաժան համար: Ներկառուցվում է պատերի մեջ, շրիշակների հետևում:	մ	96	0.53	51.29
	Ընդամենը				647.13
	Վերադիր ծախսեր 13,3%				86.07
	Ընդամենը				733.20
	Շահույթ 11%				80.65
	Ընդամենը				813.85
	ԱԱՀ 20%				162.77
	Ընդամենը				**976.62**
	Լուսատուներ				
1	Առաստաղից կախովի լուսատու՝ ներկառուցված 72Վտ, 4000-6000K, 5700lm LED լամպով, չափը՝ 1200x600x15 մմ, գույնը՝ սպիտակ, նյութը՝ ալյումին+պլաստիկ, IP20: Լույսի ցրելու անկյունը՝ 120 աստիճան: Էներգաարդյունավետության դասը՝ A: Կախելու բոլոր պիտույքների հետ միասին՝ կոմպլեկտով (էլ. հոսանքի փոխարկիչը ներառյալ): Գործարանային արտադրության: առնվազն 2 տարվա երաշխիքով	հատ	5	37.52	187.58
2	Առաստաղից կախովի լուսատու՝ ներկառուցված 36-45Վտ, 4000-6000K, 2700-3600lm LED լամպով, չափը՝ 1200x300x15 մմ, գույնը՝ սպիտակ, նյութը՝ ալյումին+պլաստիկ, IP20: Լույսի ցրելու անկյունը՝ 120 աստիճան: Էներգաարդյունավետության դասը՝ A: Կախելու բոլոր պիտույքների հետ միասին՝ կոմպլեկտով (էլ. հոսանքի փոխարկիչը ներառյալ):	հատ	9	20.02	180.14

	Ընդամենը				431.72
	ԱԱՀ 20%				86.34317
	Ընդամենը				518.06
	ԱՄԲՈՂՋԸ				8093.28

* Կապալառուն աշխատանքները կատարում է Տիգրան Մեծի 22 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Վանաձորի համայնքապետարան»
Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232351024
ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Այպոշին» ՍՊԸ

Ք.Վանաձոր, Տիգրան մեծի 24/52

Ինեկոբանկ ՓԲԸ, Վանաձորի մ/ճ

Հ/Հ 2050222017141001

ՀՎՀՀ 06933045

----------Հ.Պողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 26 » հուլիսի 2017թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 17/66 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման »

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	30.09.2017թ
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Վանաձորի համայնքապետարան»
Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232351024
ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Այպոշին» ՍՊԸ

Ք.Վանաձոր, Տիգրան մեծի 24/52

Ինեկոբանկ ՓԲԸ, Վանաձորի մ/ճ

Հ/Հ 2050222017141001

ՀՎՀՀ 06933045

----------Հ.Պողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 26 » հուլիսի 2017թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	45211225	Քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ								1960200	3920400	5940000	5940000	5940000	5940000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Վանաձորի համայնքապետարան»
Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232351024
ՀՎՀՀ 06901936

----------/Մ.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Այպոշին» ՍՊԸ

Ք.Վանաձոր, Տիգրան մեծի 24/52

Ինեկոբանկ ՓԲԸ, Վանաձորի մ/ճ

Հ/Հ 2050222017141001

ՀՎՀՀ 06933045

----------Հ.Պողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ